



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Իրավունք չունենք դավաճանելու

Ապրիլի 13-ին Հայաստանի Հանրապետության ԱԾ-ում վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը բացահայտեց ՀՀ օրվա իշխանությունների կողմից վարվող քաղաքականությունն ու հեռանկարը ադրբեջանադարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ: Այդ քաղաքականությունը մինչ այժմ աղետալի հետեւանքներ է ունեցել հայ ազգի եւ Արցախի համար: Պարզորոշ է, որ նման քաղաքականության շարունակության դեպքում Արցախի հայաթափումը անխուսափելի է լինելու: Վարչապետի կողմից բացահայտված այս քաղաքական ուղեգիծը անընդունելի է յուրաքանչյուր պատվախնդիր հայի եւ հատկապես Արցախի ժողովրդի համար:

Ղարաբաղյան խնդրի կարգավորման յուրաքանչյուր փուլում Արցախի ժողովրդի կողմից ընտրված իշխանությունների մասնակցությունը միշտ էլ կարեւորվել է հայկական պատվիրակների կողմից: Այդ սկզբունքից ելնելով՝ միայն ՀՀ եւ Ադրբեջանի Հանրապետության հարաբերությունների շրջանակում չպիտի դիտարկել խնդրի կարգավորման գործընթացը: Այդ կարեւոր հանգամանքը բազմիցս շեշտվել է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահների կողմից: Նախքան 2018թ. ՀՀ-ում տեղի ունեցած իշխանափոխությունը՝ համանախագահների այցը Ստեփանակերտ վկայում է Արցախյան կողմի մասնակցության մասին:

Միջազգային հանրությունը՝ ի դեմս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մանդատով օժտված ԵԱՀԿ Մինսկի խմբի, տիրապետելով հակամարտության խորքային մանրամասներին՝ մշակել է իր մոտեցումները Արցախյան խնդրի կարգավորման վերաբերյալ, որտեղ ամրագրված է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Ժողովրդի կամքի ոտնահարմամբ Արցախի բռնակցումն Ադրբեջանին աներկբա հանգեցնելու է Արցախի կործանմանը:

Արցախի Հանրապետությունը՝ որպես հայկական անկախ պետականություն, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման եւ համախմբման ջախկիրն է: Արցախի անկախ պետությունն իր հիմնադրման օրվանից հայ ազգի պարծանքն ու հաղթանակի խորհրդանիշն է եղել, իսկ նրա անկումը հայ ժողովրդի համար դառնալու է բարոյական եւ պատմական անդառնալի կորուստ:

ՀՀ խորհրդարանի դահլիճում հնչող պարտվողական եւ բարոյագուրկ մոտեցումներն այլ բան չեն, քան դասալքություն: Նիկոլ Փաշինյանի դրածոների կողմից վերջերս արված արտահայտությունները միտված են սեփական անկարողությունը քողարկելուն եւ իրենց հանցավոր մոտեցումները ժողովրդի վրա բարդելուն:

Արցախը երբեք չի եղել ու չի լինելու Ադրբեջանի կազմում, եւ այդ հարցի շուրջ որեւէ քննարկում անթույլատրելի է: Մենք իրավունք չունենք դավաճանելու մեր հայրենի պետությանը, Արցախի պետականությունը կերտած հազարավոր հայորդիների թափած արյանն ու քրտինքին:



Նիկոլ Փաշինյանը չունի որեւէ մանդատ այդպիսի որոշում կայացնելու. ՀՀԴ Բյուրոյի հայտարարությունը

2022թ. ապրիլի 13-ին ՀՀ ԱԾ ամբիոնից իր ելույթի ժամանակ Նիկոլ Փաշինյանի ինքնախոստովանական ցուցմունքները եւ Հայաստան-Ադրբեջան, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների, Արցախի ու Հայաստանի Հանրապետության անվտանգային խնդիրների վերաբերյալ հայտնած դիրքորոշումները, փաստերի եւ իրողությունների նեղափոխումները վերջնականապես բացահայտեցին վարչապետի պաշտոնը զբաղեցնողի ու իր վարչախմբի քաղաքական եւ բարոյական սնանկությունը:

Այլեւս կասկածից վեր է, որ Նիկոլ Փաշինյանը կայացրել է Արցախը Ադրբեջանին հանձնելու եւ թուրքադրբեջանական տանդեմի պահանջները բավարարելու ազգակործան որոշում:

Սակայն ո՛չ Նիկոլ Փաշինյանը, ո՛չ էլ որեւէ քաղաքական ուժ կամ անձանց խումբ չունի որեւէ մանդատ Արցախի եւ արցախահայության փոխարեն կայացնելու նրանց ճակատագրի վերաբերյալ նման որոշում:

Ներկայացվող «խաղաղության» օրակարգը իրականում միտված է վարչախմբի իշխանությունը երկարաձգելուն եւ հանգեցնելու է Արցախի ու Հայաստանի համար լրջագույն սպառնալիքների, անվտանգային նոր մարտահրավերների, նոր պատերազմի, նոր կորուստների, նոր զոհերի ու նոր կապիտուլյացիայի: Արցախյան վերջին պատերազմի ընթացքում եւ դրանից հետո իշխանությունների ապաշնորհի ու ձախող վարքագիծը եւ տեղի ունեցող գործընթացները դրանց վառ վկայությունն են:

Ստեղծված ծանրագույն իրավիճակում բեկում կարող է առաջանալ, երբ համազգային ներուժի մեկտեղմամբ դիմադրություն ցույց տրվի դավադիր պայմանավորվածություններով ու սպառնալիքներով հայ ժողովրդին պարտադրվող օրակարգերին: Հայաս-

տանի գործող իշխանության հեռացումը եւ բանակցողի փոփոխությունը իրավիճակից դուրս գալու առաջին քայլն է:

Առ այդ,

1. Միջազգային հանրության, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ուշադրությանն ենք հանձնում, որ Նիկոլ Փաշինյանի կողմից ուղղակի կամ անուղղակի, բանավոր կամ գրավոր ձեւով Արցախը Ադրբեջանի ենթակայությանը հանձնելու որեւէ հանձնառություն լեգիտիմ չէ եւ առ ոչինչ է: Արցախի ժողովրդի՝ իր բնօրրանում ինքնորոշվելու իրավունքն ամրագրված է միջազգային իրավական ակտերով, ինչը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ 2007 թվականից որպես սկզբունք դրված է արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման հիմքում:

2. Ուղերձ ենք հղում հայ ժողովրդին՝ դիմագրավելու ներքին ու արտաքին բոլոր սպառնալիքներին, չիուսահատվելու, չհամակերպվելու, լինելու միասնական, հավատալու սեփական ուժերին ու պայքարելու հանուն հայ ազգի իրավունքների եւ շահերի: Տոկուն եւ անկոտրում արցախահայությանը վստահեցնում ենք, որ հայ ազգը զորավիգ է իր արդա՛ր պայքարին:

3. Հավատարիմ իր առաքելությանը՝ Դաշնակցությունն իր համահայկական կառույցով վճռական է՝ այս պայքարում լինելու եւ առաջամարտիկ, եւ զինվոր:

Միաժամանակ հայտնում ենք մեր պատրաստակամությունը՝ համագործակցելու բոլոր նրանց հետ, ովքեր պատրաստ են պայքարելու հանուն արժանապատիվ ու անվտանգ Հայաստանի ու Արցախի:

ՀՀԴ Բյուրո
14.04.2022թ.

Անընդունելի է Արցախի համար որեւէ այլ կարգավիճակ, քան ինքնորոշումը

Ապրիլի 14-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովը Արթուր Թովմասյանի նախագահությամբ հրավիրել է արտահերթ նիստ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ 2022 թվականի ապրիլի 13-ին Ազգային ժողովի պատգամավորների կողմից Ազգային ժողով է ներկայացվել պաշտոնական գրություն Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու նախաձեռնությամբ:

Առաջարկվել է 2022թ ապրիլի 14-ին, ժամը 19:00-ին գումարել ԱՀ ԱԺ արտահերթ նիստ՝ օրակարգում ընդգրկելով Ազգային ժողովի հայտարարությունը:

Խորհրդարանականները մեկ րոպե լռությամբ հար-

գել են արցախյան 3 պատերազմներում, Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում եւ 2022թ. մարտի վերջին Քարազխի համար պայքարում նահատակված հայորդիների անմար հիշատակը, ապա անցել օրակարգային հարցի քննարկմանը:

Հայտարարության տեքստը ներկայացրել է ԱՀ ԱԺ պատգամավոր Արթուր Մոսիյանը: Հարցը քննարկվել էր խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նիստում եւ 4 կողմ ձայնով արժանացել հանձնաժողովի դրական եզրակացությանը:

Մտքերի փոխանակությամբ հանդես են եկել պատգամավորներ՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության քարտուղար Վահրամ Բալայանը եւ

Դավիթ Իշխանյանը. «Միասնական հայրենիք» խմբակցության ղեկավար Գագիկ Բաղունցը, Արցախի «Արդարություն» խմբակցության քարտուղար Մետաքսե Հակոբյանը, «Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Մելքունյանն ու Գեղամ Ստեփանյանը, «Ազատ հայրենիք-ԶՄԴ» խմբակցության ղեկավար Արթուր Հարությունյանը, իսկ եզրափակիչ ելույթներով՝ ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը եւ «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը:

Նիստին ներկա 32 պատգամավորները միաձայն կողմ են քվեարկել հայտարարության ընդունմանը:

Պահանջում ենք, որ Հայաստանի իշխանությունները հրաժարվեն իրենց ներկայիս աղետալի դիրքորոշումից

Արցախի ԱԺ արտահերթ նիստում «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը հրապարակեց Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարության տեքստը, որով անընդունելի են համարում Արցախի համար որեւէ այլ կարգավիճակ, քան ինքնորոշումն է:

Հայտարարությունում մասնավորապես նշվում է.

«Արցախի Հանրապետության ներկայիս իրավաքաղաքական կարգավիճակը ձեւավորվել է համաժողովրդական կամքի արտահայտությամբ՝ երեք հանրաքվեների, դրանց արդյունքում ընդունված Սահմանադրության ազդեցությամբ եւ հայության բոլոր հատվածների միջեւ նախընթաց տարիներին հաստատված համազգային համաձայնության ճանապարհով:

Արցախահայությունը քաջ գիտակցում է խաղաղության գինը: Արցախի պետականությունը եւ պատմական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու իրավունքը բացարձակ արժեքներ են, եւ դրանցից անգամ պատերազմի սպառնալիքը չի կարող մեզ հետ պահել:

Հայաստան-Ադրբեջան «խաղաղության» օրակարգով՝ Արցախը Ադրբեջանին բռնակցելու ցանկացած բանակցային գործընթաց ինքնին, ինչպես նաեւ դրանից բխող փաստաթղթի ստորագրումը տապալում է ոչ միայն Արցախի պետականությունը, այլեւ արցախա-

հայության՝ իր պատմական հայրենիքում ապրելու անբախտելի իրավունքը:

Պահանջում ենք, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները հրաժարվեն իրենց ներկայիս աղետալի դիրքորոշումից եւ առաջնորդվեն բացառապես

այս արժեքներով: Ոչ մի իշխանություն իրավունք չունի «խաղաղության» պատրվակով Արցախի համար անընդունելի կարգավիճակի, ինչպես նաեւ միջազգայնորեն ճանաչված ինքնորոշման իրավունքի բանակցային նշանոց իջեցնելու:

Արցախահայության անունից դիմում ենք՝

- Աշխարհասփյուռ հայությանը՝ այս արդար պայքարում միասնաբար եւ վճռականորեն կանգնել Հայաստանի եւ Արցախի եղբայրների ու քույրերի կողքին:

- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեր գործընկերներին՝ չչեղվել ՀՀ Գերագույն խորհրդի՝ 1992թ. հուլիսի 8-ի որոշման ուղեգծից:

- Ռուսաստանի Դաշնության ղեկավարությանը՝ մեզ համար խիստ կարեւոր խաղաղապահ առաքելության ընթացքում առիթ չտալ որեւէ մեկին շահարկելու ծագող խնդիրները՝ որպես Արցախի ժողովրդի հետագա անվտանգությունը հարցականի տակ դնելու հիմք:

- ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներին՝ անկախ առկա այլ տարածայնություններից՝ շանքեր գործադրել պահպանելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման միակ միջազգային մանդատ ունեցող ձեւաչափը:

Ստեփանակերտ
14 ապրիլի 2022»:



Արցախն ու արցախցին հաստատակամ են. Դավիթ Իշխանյան

«Զեմ ուզում կենտրոնանալ ՀՀ վարչապետի ելույթին, որվազային թատերականացված եւ բեմադրված օցենարին: Դա ոչ թե ինքնախոստովանության ու ինքնաքննադատության, այլ մեծամտության, պոպուլիստական, մանիպուլյատիվ եւ ուղեղներ վանալու տարիների գործելանոցի հարկի պահվածք էր, որով կրկին ներկայացավ ոչ միայն մեր, այլեւ համաշխարհային հանրությանը, որին հավանաբար պատասխանատու է իր անցած ճանապարհի եւ իր հասած նշանոցի համար:

Մեզ համար զարմանալի ու անակնկալ չէին այդ ելույթում հնչած թեզերը: Այն, ինչ արվում էր թաքուն, բացահայտվեց, այն, ինչ չէր հաջողվել տասնամյակներ, հիմա փորձում են առիթը չկորցնել:

Խղճահարության դրվագներ ստեղծող առաջնորդը չի՝ կարող լինել իմ եւ ձեր, այն հպարտ ժողովրդի առաջնորդը, որ 1988 թվականին Լորից որդեգրեց ազգային-ազատագրական պայքարի գաղափարն ու տեսլականը՝ ունենալով հաջողությունների ու կորուստների շարք, տալով բազմաթիվ զոհեր, չընկճվելով, չհուսահատվելով, գիտակցելով, թե հանուն ինչ նպատակի է այդ ամենը՝ հանուն ապագա սերունդների, հանուն ազգային իդեալների: Հանուն նպատակի եւ ոչ թե միջոցի:

Եվ ի՞նչ. հիմա փոխվում է մեր որդեգրած պայքարի փիլիսոփայությունը, նպատակը փոխարինվում է միջոցով: «Խաղաղության դարաշրջան»-ի բացման քողի տակ հրահրվում է նոր պատերազմ, նոր ողբերգություններ, եթե ուղղակի ասենք՝ Արցախի հայաթափում: Մեզ վախեցնում են միջազգային հանրության դիրքորոշումների կեղծ ներկայացմամբ: Այդ ո՞րն է միջազգային հանրությունը, որտե՞ր էին նրանք 2020 թվականի աշնանը, ո՞ւմ ջրաղացին էին ջուր լցնում, իսկ ո՞ւմ վառված կրակին՝ յուղ: Այդ ի՞նչ արժեքներ դավանող միջազգային հանրության մասին է խոսքը. գուցե ավելի բաց ներթափառությամբ խոսվեր: ԼԳԲՏ կամ նոր աշխարհակարգ, բառեր, որոնք հավանաբար մեր հանրությանը շատ բան չեն ասում: Հավանաբար ԵԱՀԿ-ն էլ է համաշխարհային հանրություն: Իսկ ո՞րն են նրանք՝ մանդատ ունեցողները:

Չպետք է լինե՞ք զգայական, պրագմատիկ լինելը քաղաքական գործիչների ու պետական այրերի համար

կարեւոր հատկանիշ է, չպետք է իլյուզիաների դաշտը մտնել, բայց չպետք է նաեւ ապակողմնորոշել, մանիպուլյացնել, խեղաթյուրել:

Գիտակցաբար փորձել եք բոլոր տարբերակները՝ բանակցություններ սկսելով զրո կետից, սեփական նախաձեռնություններ ցուցաբերելով, նույն համաշխարհային հանրությանը մուրթեցնելով, ամեն ինչ հասցնե-



լով ուղղակի նահանջի եւ կորուստի, արցախցիների ու Արցախի կողմից մանդատ չունենալու պատճառաբանություններով Արցախի ճակատագիրը եք մոգոնում, արյուն հեղում ու հետո խոստովանում: Հետո՞ ի՞նչ:

Այդքան միամիտ չենք: Եթե քաղաքական վեկտոր եք փոխում, հստակ կողմնորոշվեք եւ հայտարարեք, որպետքի մեր հեռու եւ մոտիկ բարեկամներն էլ հասկանան ու կողմնորոշվեն, մենք էլ հասկանանք ու կողմնորոշվենք:

Ոհմակային հոգեբանությամբ ձեր արբանյակներին բաց եք թողել՝ Արցախի ու արցախցիների մասին բարբառանքներ հնչեցնելու, եւ այն էլ՝ ամենապատասխանատու եւ բարձր ամբիոնից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ամբիոնից:

Կատարե՞ք Արցախի եւ արցախցիների անվտանգության երաշխավորի ձեր պատականությունները, խեղված ձեւակերպումներով մի՛ ներկայացրեք այնպես, իբր ցանկանում եք պաշտպանել Արցախի ժողովրդի իրավունքները: Այդ իրավունքները պաշտպանել են մեր պապերն ու ծնողները, մենք եւ մեր որդիները: Արցախը հայկական պահելով, կերտելով պետականություն՝ այդ իրավունքները պահպանվել է անցած 30 տարիներին ու կպահպանենք ապագայում եւս: Դրանք պետք է պահպանվեն միասին:

Ընդունել եք Ադրբեջանի առաջարկած կետերն ու պահանջները՝ չառաջարկելով սեփականը: Այդ քայլը պատճառաբանել եք որպես ազգային շահերից բխող քայլ: Սկսում եք խաղաղության բանակցությունների բուն գործընթաց, նախաձեռնում երկկողմ ձեւաչափով խաղաղության պայմանագրի նախապատրաստական աշխատանքներ, սահմանազատման եւ սահմանագծման միտված հանձնաժողովի ձեւավորում եւ, որ զարմանալին է, հանձն առնում այս գործընթացը կարճ ժամանակում ավարտին հասցնել:

ԱԺ նախորդ արտահերթ նիստի ժամանակ այս ամբիոնից բարձրաձայնել էի. սիրելիներս, ոչ ոք չի ձգտել ու չի ձգտում պատերազմի, ոչ ոք այնքան խաղաղություն չի ուզում, որքան մենք այստեղ՝ Արցախում:

Պետք է գիտակցել, թե ինչ է նշանակում սեփական հայրենիք ունենալու իրավունքը եւ, առավել եւս, այդ հայրենիքում ապրելու իրավունքը, ինչ է նշանակում արժանապատիվ ապրելու իրավունքը: Նորից եմ ուզում կրկնել, պետք չէ մեզ վախեցնել պատերազմով, դա չի կարող մեզ պարտադրել հրաժարվելու 30 տարի առաջ մեր որդեգրած պայքարից:

Ես հավատում եմ մեր ժողովրդի հավաքական ուժին, նրա անկոտորում ոգուն ու կամքին: Մենք ավելի ծանր կացություններ ենք հաղթահարել:

Դեռեւս ուզում եմ միամտորեն հույս պահել, որ մեր պետականությունը կորստի ճանապարհով տանող ՀՀ իշխանությունները եւ նրա առաջնորդը այս աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում իրենց մեջ ուժ կգտնեն համապատասխան քայլեր ձեռնարկելու, որպեսզի ապագային միտված որոշումները կայացվեն ունակ քաղաքական գործիչների ու հեռատես առաջնորդների միջոցով:

Արցախը գրահաբաճկոն է, որը միտումնավոր կամ դավադրաբար հանելով՝ խոցելի դարձրիք ե՛լ Արցախը, ե՛լ Հայաստանը. Արթուր Մուսիյան



«Դեռ ամիսներ առաջ մենք մի շարք հանդիպումներ էինք ուզում ունենալ միջխորհրդարանական հանձնաժողովի ձևաչափով, բայց ինչպես տեսանք՝ միջխորհրդարանական հանձնաժողովի նիստը չէր կայանում, չկային մենք ունեինք մտահոգություններ, որոնք ցանկանում էինք բարձրաձայնել: Ինչպես, հանձնաժողովի նիստը չկայացավ, եւ մենք ԱՅ ԱԺ հինգ խմբակցությունների ղեկավարների եւ ԱՅ ԱԺ նախագահի հետ ուղեւորվեցինք քաղաք Երեւան, հանդիպեցինք Ալեն

Սիմոնյանի եւ մի քանի այլ պատգամավորների հետ:

Մտահոգություններ ունենալով՝ հարց ուղղեցի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին՝ ասելով. «Կարգավիճակ» ասելով՝ Ձեր իշխանությունն ի՞նչ է հասկանում, եւ կարո՞ղ է մի օր ասեք «Կարգավիճակ Ադրբեջանի կազմում»: Ալեն Սիմոնյանը վիրավորած ասաց՝ «մեզ ինչի՞ տեղ եք դնում, իհարկե՞ խոսքը վերաբերում է անկախությանը կամ ՀՀ-ի հետ միացմանը, հո չե՞նք ասելու՝ Ադրբեջանի կազմում»: Մեր ընկերներից մեկն ինձ անգամ կշտամբեց, թե ինչու այդ հարցը տվեցի՞ մարդը վիրավորվեց: Ես պատասխանեցի՝ ճիշտ եմ արել, որովհետեւ ճանաչում եմ այդ տեսակը: Իմ դաստիարակությունն ինձ թույլ չի տալիս պատասխանել Ալեն Սիմոնյանին. ես կ'իսկողնեմ ինքն այդ հարցին պատասխաններ՝ իրենք իրենք ինչի՞ տեղ են դրել, որ մի խմբակով կամ մի քանի հոգով ուզում են որոշել մի ամբողջ ժողովրդի ճակատագիր թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում:

Եթե որոշների համար պարզ չէր՝ այդ հարցը տվել ենք այսօրվա համար: Փաստորեն, վարչապետի երեկվա ելույթից եւ իջեցված հրահանգից հետո պատգամավորների ելույթներից պարզ դարձավ մի ճշմարտություն. այն, ինչ մենք մտածում էինք, դժբախտաբար իրականություն դարձավ: Այդ տեսակը, ես ձեզ հավատացնում եմ, մեր ժողովրդի մեջ շատ է, չնայած ժամանակավոր իշխանության է հասել կամ որոշակի խնդիրներ լուծելու համար իշխանության է բերվել: Այդ

տեսակը մեծամասնություն չէ, չի կարող հայ ազգի մեջ այդ տեսակը մեծամասնություն լինել:

Բազմաթիվ ստերի, կեղծիքների, մանիպուլյացիաների հետեւանքով ձգտում ենք չհավատալու տալ, ասել՝ ինչ-որ բան երեւի ճիշտ էն հասկացել մարդիկ, բայց ոչ, ամեն ինչ պարզ է, ակնհայտ է: Վերջին պատերազմից հետո թե՛ Փաշինյանը, թե՛ Ալիեյը Արցախի մասին խոսում են նույն լեզվով: Ես ՀՀ իշխանություններին հորդորում եմ՝ պարզապես դադարեցնել այդ ահաբեկությունը, պատերազմով սպառնալը, վախեցնելը թե՛ Արցախին, թե՛ Հայաստանին, թե՛ աշխարհասփյուռ հայությանը: Հայ ժողովրդից առավել՝ ոչ մեկը խաղաղության գինը չգիտի:

Նայելով Ադրբեջանի ներկայացրած հինգ կետերին, տեսնում ենք, որ այդ աղետալի քայլով Նիկոլ Փաշինյանն ու վարչախումբը ոչ միայն գոյացնում են մեր սերունդների, բազմահազար զոհերի թափած արյան գինը, ձեռք բերված անկախությունը, ազատ ու անկախ ապրելու մեր իրավունքը, այլ նաեւ գալիք սերունդների ապագան են վտանգում:

Տարիներ շարունակ, հատկապես վերջին ամիսներին «Արցախը բեռ է», «քանի Արցախը կա՝ լավ է ենք ապրելու» եւ այլ թեզեր կամաց-կամաց մարդկանց բնագրի, ենթագիտակցության մեջ են նստեցնում:

Սիրելի՛ հայրենակիցներ, Արցախը բեռ չէ, Արցախը գրահաբաճկոն է, որը միտումնավոր կամ դավադրաբար հանելով՝ խոցելի դարձրիք ե՛լ Արցախը, ե՛լ Հայաստանը: Հետ կանգնեք այդ քայլից, քանի դեռ ուշ է:

ՀՀ-ԱՅ-Սփյուռք եռամիասնությունն անսասան դարձնելու պարագայում Արցախի Հանրապետությունն ապրելու է Վահրամ Բալայան

«2020թ. Արցախյան երրորդ պատերազմը փոխեց մեր բոլորի կյանքը՝ բացասական առումով. մենք այլ իրողության մեջ ենք ապրում: Մենք բավականին դժվար պայմաններում ենք հայտնվել, որովհետեւ գտնվում ենք մեծ տերությունների շահերի կիզակետում: Դժվար պայմաններում ենք հայտնվել, որովհետեւ ունենք հարեւան, որն օրուգիշեր երազում է ոչ միայն Արցախի Հանրապետությունը վերացնել, այլ նաեւ հրաժարվել «Լեռնային Ղարաբաղ» հասկացությունից: Բայց մեզ համար առավել դժվար է, որովհետեւ եղբայրական Հայաստանի Հանրապետության օրվա իշխանությունները պարտավորական կեցվածք են որդեգրել:

Ի՞նչ կարելի է անել: Իսկապես դժվար պայմաններում ենք հայտնվել: Թվում է, թե անհույս իրավիճակ է եւ հնարավոր չէ որեւէ լուծում ապահովել: Բայց դա այդպես չէ: Արցախցին դարերի ընթացքում միշտ գտել է այդ հարցի պատասխանը, որի անունը պայքար է: Այն ժողովուրդը, որը չի հաշտվում ստրուկի կարգավիճակի հետ, որը չի հաշտվում, որ մենակ կարող է զոհվել, նա չի զոհվում: Նա պայքարում է եւ հաղթանակներ է կերտում: Այդպես եղել է նաեւ ոչ հեռավոր անցյալում՝ 30 տարի առաջ: Երբ թվում էր, թե անհնար է ինչ-որ բան անել, այս ժողովուրդը ոտքի կանգնեց եւ հաղթանակ կերտեց:



Իմ կարծիքով, արտաքին քաղաքականության ասպարեզում մենք պետք է վերաթարմացնենք քաղաքական այն արահետը, որ Ռուսաստանի հետ հենց նույն Արցախում գծվել է 17-րդ դարի վերջից: Շեշտում եմ, որ այդ քաղաքական արահետը պետք է վերականգնել, որը, ցավոք սրտի, այսօր չկա:

Ներքին քաղաքականության ասպարեզում մենք պետք է եղբայրական Հայաստանի Հանրապետության ժողովրդի հետ երկխոսություն սկսենք: Հենց ժողովրդի հետ պետք է երկխոսություն սկսենք, որովհետեւ իշխանության աղբյուրը ժողովուրդն է: Եվ համոզված եմ, որ այն ժողովուրդը, որը 90-ական թվականներին հաղթանակ է կերտել, այդ երկխոսության, փոխմտադրման պայմաններում կշարունակի կերտել նորանոր հաղթանակներ:

Եվ վերջում, մենք պետք է ամեն կերպ մեր եռամիասնությունը՝ ՀՀ-ԱՅ-Սփյուռք, դարձնենք անսասան: Անսասան դարձնելու պարագայում՝ համոզված եղեք, որ Արցախի Հանրապետությունն ապրելու է եւ «Արցախ» հասկացությունը դարձրեք լինելու է, ինչպես եղել է նախանցյալ ժամանակներում»:

Արցախի կորստից հետո չի լինելու Հայաստանի Հանրապետություն. Դավիթ Բաբայան

«Մենք գտնվում ենք մեր պատմության ամենաբարդ ժամանակահատվածում: Ես չեմ չափազանցնում: Մենք անցել ենք շատ բարդություններով, կորուստներով դարեր, հազարամյակներ շարունակ, բայց հիմա կանգնած ենք մեր ժողովրդի եւ պետականության ապագայի հարցի առջեւ: Սա մենք պետք է քաջ գիտակցենք: Հետեւաբար, որոշվում է վճռվում է ոչ միայն Արցախի, այլ հայոց պետականության, հայ ժողովրդի ճակատագիրը: Այս պատասխանատվության զգացումը մենք պետք է միշտ ունենանք:

Խոսելով ընդհանրապես Արցախի կարգավիճակի մասին՝ տարբեր նշանողների եւ այլն, պետք է նշենք, որ մենք նշանողներ չունենք ընդհանրապես, ունենք կարմիր գծեր: Կարմիր գծերի խախտումը պարզապես կբերի ողբերգության, ուրիշ ոչինչ, որովհետեւ Ադրբեջանի կազմում Արցախը ապագա ունի, մեկ ապագա՝ ցեղասպանություն:

Տարբեր պատճառներով չմտնենք գիտաբանական դաշտը, բայց դա այդպես է լինելու:

Արցախի կորստից հետո Հայաստանի Հանրապետության գոյությունն արդեն վճռված է լինելու՝ չի լինելու Հայաստանի Հանրապետություն, ժամանակի խնդիր է լինելու: Շատ շուտ այդ հարցը «կարգավորվելու» է, բնական է՝ ի վնաս հայ ժողովրդի:

Երբ որ խոսում ենք խաղաղության մասին, իհարկե՛ սա լավ գաղափար է, որեւէ մեկը չի կարող դեմ լինել խաղաղությանը, բայց անհրաժեշտ է հասկանալ, որ դասական ձեռով չկա իդեալական խաղաղություն: Խաղաղությունը՝ դա հավասարակշռվածություն է: Պետք է պահպանել այդ հավասարակշռվածությունը: Հնարավոր է դա անել: Իհարկե, հնարավոր է, որովհետեւ գոյություն չունի իդեալական խաղաղություն, չի լինում այդպիսի բան, բայց կարելի է կայունություն պահել հավասարակշռվածության միջոցով: Այդ հնարավորությունները կան:

Երբ որ խոսում ենք, որ կա միջազգային հանրության հավաքական տեսակետ, այդպիսի բան գոյություն չունի: Ի՞նչ է նշանակում՝ միջազգային հանրություն: Այն բազմաշերտ ու բազմաբնույթ երևույթ է: Ավելին, այսպիսի ճեղքվածք, որ մենք տեսնում ենք հիմա, միջազգային հանրությունը երեւի վերջին անգամ ունեցել է 1939-1945 թվականներին:

Մենք տեսնում ենք՝ աշխարհաքաղաքական ինչպիսի պայքար է գնում: Հետեւաբար, չկա միասնական միջազգային հանրության կարծիք: Նման բան գոյություն չունի: Նույնիսկ ամենախաղաղ պայմաններում նման բան գոյություն չունի, որովհետեւ տարբեր երկրներ ունեն իրենց ազգային շահերը, տարբեր երկրներում կան տարբեր ուժեր, որոնք նույնպես ունեն իրենց շահը եւ պայքարում են իրենց շահի



համար: Սա նշանակում է, որ մեզ համար աշխարհաքաղաքական առումով կան հնարավորություններ՝ փրկելու եւ պահելու Արցախը: Ավելին, կրկնում եմ, փրկելով Արցախը՝ փրկվում է Հայաստանը, որովհետեւ Արցախը կորցնելուց հետո չի լինելու Հայաստան:

Աշխարհաքաղաքականության մեջ կա օրենք՝ պետք է ունենալ սկզբունքներ եւ հետեւել այդ սկզբունքներին: Եթե ունես սկզբունք՝ դառնում ես սուբյեկտ, եթե չունես սկզբունք՝ դառնում ես օբյեկտ, այսինքն՝ քեզ այլեւս հաշվի չեն առնում եւ քո հաշվին իրենց հաշիվներն են մաքրում: Սա շատ պարզ տրամաբանություն է:

Դրա համար Արցախի Հանրապետությունն իրականացնելու է բոլոր անհրաժեշտ քայլերը դիվանագիտական դաշտում, որպեսզի հասնի նրան, որ փրկենք այն, ինչ մնացել է Արցախից: Կարող եք այս հարցում վստահ լինել:

Շատ լավ է, որ մենք միասնական կանգնած ենք մեր երկրի ապագայի համար պայքարում: Ես ավելի քան համոզված եմ, որ նման տեսակետ կիսում է հայ ժողովրդի մեծամասնությունը՝ լինի դա Հայաստանի Հանրապետությունում, թե Սփյուռքում:

Պետք է իսկապես համախմբվենք, ճիշտ աշխատենք, հնարավորինս գերծ մասնա շահարկումներից, որովհետեւ պահը շատ կարելու է, եւ թե ճիշտ աշխատենք, իսկապես հասնելու ենք մեր նպատակին: Իսկ մեր նպատակը մեկն է՝ փրկել Արցախը, փրկել մեր երկիրը: Բոլոր հնարավորությունները կան: Եթե չի լինում այդ հնարավորությունը, իհարկե՛ անկեղծ կասենք, բայց պարզապես իրավունք չունենք մեզ պարտված զգանք, որովհետեւ անիծված ենք լինելու բոլորի կողմից եւ Աստծո կողմից»:

Արցախը երբեք չի եղել ԽՍՀՄ-ից անկախացած Ադրբեջանի մաս. Արթուր Զարուբյուկյան

«Ինչպես 1988 թվականին, այնպես էլ հիմա արցախահայության համար առաջնային պլան է մղվել լինել-չլինելու գոյաբանական հարցը:

Աշխարհաքաղաքական բարդ զարգացումների ֆոնին ուժի կիրառման սպառնալիքի տակ Ադրբեջանը փորձում է հասնել Արցախի բռնակցման եւ հայաթափման իր վաղեմի երազանքին: «Արցախն առանց հայերի» Ադրբեջանի այս տեսլականը պատմական հիմնավորումից զատ արտահայտված է նաեւ ներկա իրողությունների եւ գործողությունների տրամաբանության մեջ:

2020 թվականի նոյեմբերի 9-ին կնքված եռակողմ հայտարարությունից հետո Ադրբեջանը, անտեսելով միջազգային հանրության կողմից ամրագրված նորմերը, բացեիբաց հոգեբանական եւ ֆիզիկական ահաբեկման է ենթարկում արցախահայությանը:

Սա արվում է այն դեպքում, երբ դե յուրե եւ դե ֆակտո չկան ադրբեջանական իշխանության լծակներ Արցախում: Նման պարագայում օդում կախված է մնում «ինչ կլինի արցախահայության հետ, եթե Ադրբեջանն ունենա այդ լծակները» հռետորական հարցը:

Արցախը չի կարող ունենալ ապագա Ադրբեջանի կազմում:

Այս բացարձակ ճշմարտությունը չնկատելով քաղաքական անհեռատեսություն է: Քաղաքական անհեռատեսություն է նաեւ պարտադրված խաղաղությունից իրական խաղաղություն ակնկալելը: Բոլորս էլ կողմ ենք խաղաղության, խաղաղություն, որ պիտի ունենա անվտանգային երաշխիքներ եւ չլինի պետականության կորստի հաշվին:

Արցախի հայկական ապագան գոյաբանական հարց լինելուց զատ՝ նաեւ միջազգային հանրության կողմից վավերացված ինքնորոշման իրավունքի իրացումն է, եւ անընդունելի է տարածքային ամբողջականության իրավունքի թեզի տակ կոխկրտել մեր ազատ կամարտահայտման, այն է՝ ինքնորոշման իրավունքը:

1975 թվականի Զեւսիկիի Եզրափակիչ ակտի, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի եւ միջազգային իրավունքի դոկտրինի համաձայն՝ տարածքային ամբողջականության եւ ինքնորոշման իրավունքի միջեւ հակասություններ չկան:



Ավելին, տարածքային ամբողջականության սկզբունքի շրջանակներում անգամ Արցախը երբեք չի եղել ԽՍՀՄ-ից անկախացած Ադրբեջանի մաս: Լեռնային Ղարաբաղը, իրացնելով իր ազատ ինքնորոշման իրավունքը, 1991 թվականի սեպտեմբերի 2-ին հռչակել է անկախություն, այնուհետեւ 1991թ. դեկտեմբերի 10-ին հաստատել այն հանրաքվեով բնակչության ուղղակի կամարտահայտման միջոցով՝ որպես ժողովրդավարության բարձրագույն դրսեւորում, միջազգային իրավա-

նորմերի եւ այն ժամանակ գործող ԽՍՀՄ օրենսդրության համաձայն:

Միջազգային հանրությունը կոնֆլիկտի շուրջ ձեւավորված Մինսկի խմբի շրջանակներում քանիցս արձանագրել է Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման 3 հիմնական սկզբունքները, որոնցից ուժի կիրառման սպառնալիքն ու ուժի կիրառման անթույլատրելիությունը բազմաթիվ անգամ խախտվել է Ադրբեջանի կողմից եւ շարունակում է խախտվել մինչեւ օրս: Տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման մասով հակասության բացակայության եւ առանձին հարթակներում իրավիճակի հանգուցալուծման մասին, բացի միջազգային իրավունքի հիմնավորումից, հատկանշական է նաեւ 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության կողմերից մեկի՝ Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի 2022 թվականի հունվարի 14-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հնչեցրած մեկնաբանությունը: «Մենք կողմ ենք, որպեսզի որքան հնարավոր է շուտ անցնենք Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանի սահմանագատմանը: Դա չի վերաբերում Ղարաբաղյան տարածաշրջանին եւ կարգավորման հարցերին. դա զուտ երկկողմ հարց է, որն արդեն գրեթե մեկ տարի է, ինչ մենք առաջարկում ենք սկսել մշակել՝ դրա համար սահմանագծման եւ սահմանագատման հանձնաժողով ստեղծելով», - ասել է Ս. Լավրովը՝ դրանով իսկ արձանագրելով դեմարկացիայի եւ դեիմիտացիայի գործընթացների եւ Արցախի կարգավիճակի՝ իրար հետ կապ չունենալու փաստը:

Ինչ է փոխվել մի քանի ամսվա մեջ: Ինչո՞ւ պիտի մեր կենսական շահերի հարցում գիշումների գնանք՝ դիմացը չստանալով ոչինչ, ավելին՝ ստանալով գոյաբանական հարցի խորացում եւ նորանոր մարտահրավերներ:

Ով հավատում կամ նույնիսկ մտածում է, որ Արցախը Ադրբեջանի կազմում ապագա ունի, նա պետական հանցագործ է... Մետաքսե Զակոբյան



«Նիկոլ Փաշինյանին պետք է կանգնեցնել եւ թույլ չտալ, որ նա միանձնյա որոշումներով վերջնականապես կործանի Հայաստանը եւ Արցախը: Այս մասին ապրիլի 14-ին Արցախի Հանրապետության ԱԺ արտահերթ նիստում հայտարարեց Արցախի ԱԺ «Արդարություն» խմբակցության պատգամավոր Մետաքսե Զակոբյանը:

Հայրենակիցներ... Դիմում եմ ոչ միայն այս դահլիճում նստած գործընկերներին, այլ Արցախի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին եւ Սփյուռքի մեր հայրենակիցներին: Մտքերը, որոնցով ուզում եմ կիսվել ձեզ հետ, վստահ եմ՝ յուրաքանչյուր կգտնի այդտեղ նաեւ իրենը:

Երեկ, ապրիլի 13-ին Հայաստանի Հանրապետության վարչապետը ՀՀ Ազգային ժողովում հայտարարեց, որ ինքը չի կարողանում կանգնեցնել Արցախը Ադրբեջանին հանձնելու գործընթացը եւ սկսեց հիմնավորել՝ կրկին խեղաթյուրելով իրականությունն ու փաստերը: Չարմանալի չէ նրա այդ կեցվածքը, զարմանալի է ու բա-

նականությունից դուրս, որ մինչեւ այսօր նա դեռ Հայաստանի Հանրապետության վարչապետն է: Եթե կոչ, ապա այն միակն է. Փաշինյանին պետք է կանգնեցնել, թույլ չտալ, որ այս մարդը բանակցի եւ միանձնյա որոշումներով վերջնականապես կործանի Արցախն ու Հայաստանը... Այս մարդը կարծում է՝ խաղաղության դարաշրջանի մասին անդադար խոսելով, հայրենիք հանձնելով ու հային գոհելով, կարողանալու

է խնդիրներ լուծել ու խաղաղություն հաստատել: Սակայն որեւէ մեկը կամ որեւէ երկիր չի կարող դատել ու դատապարտել մեր պայքարը՝ հանուն մեր ու մեր սերունդների արժանապատիվ խաղաղության մեջ ապրելու: Այն միայն հաղթանակի արդյունքում է: Սա բնավ չի նշանակում պատերազմ ու մատաղացու դառնալ՝ ինչպես ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը, որը երեկ իր ելույթում խոստովանեց, որ 1000-ավոր զոհերի հանգեցրած որոշումների հեղինակ դարձավ, եւ համեմեց՝ դա ավելին է, քան դավաճանությունը, դա սխալ է:

1988 թվականից առ այսօր՝ հայի ընտրությունն է, որ Արցախը ոչ մի պայմանով չի կարող լինել Ադրբեջանի կազմում, եւ մենք չենք հեռացել մեր ընտրությունից, իսկ հարկ եղած դեպքում պաշտպանել ենք այն եւ շարունակելու ենք պաշտպանել՝ անկախ ամեն ինչից:

Ով հավատում կամ նույնիսկ մտածում է, որ Արցախը Ադրբեջանի կազմում ապագա ունի, նա պետական հանցագործ է...»:

Աննկուն վճռականությամբ կրկին ոտքի կանգնեց մեր հայրենիքի պաշտպանության դիրքերում. Գագիկ Բաղունց

«Կարծում եմ՝ այսօր երկար ու պերճաշուք ելույթների ժամանակը չէ: Նախ, ուզում եմ հիշեցնել ողջերի խոսքերը, որով Հին աշխարհում ծնողներն իրենց զինվոր-որդիներին ուղարկում էին մարտի՝ «Վահանով կամ վահանի վրա»: Եկել է մեր ժամը: Լուռ համաձայնությամբ կամ ճնշման տակ (այդ չէ կարեւորը) համաշխարհային եւ տարածաշրջանային դերակատարները Հայաստանի Հանրապետության վզին են փաթաթում Խաղաղության պայմանագիր, որն Արցախի համար

թվականի նոյեմբերին մնացին այստեղ՝ գեներ ձեռքին պատրաստ զոհվելու, բայց չհանձնվելու:

Հանուն մեր երեխաների ապագայի, հանուն համայն հայության ապագայի, մենք փաստացի հայտարարում ենք համահայկական կոնսոլիդացիա: Յուրաքանչյուր ոք, ում համար հայի պատիվն ու արժանապատվությունը դատարկ խոսքեր չեն, կանգնեք Արցախի կողքին եւ հռչակեք ձեզ Արցախի քաղաքացի:

Իսկ քաղաքակիրթ աշխարհը թող կրկին ցեղասպանություն կազմակերպի արդեն 10 միլիոնանոց արցախահայության դեմ:

Արցախը եւ հայ ժողովուրդն ունեն հավատարիմ բարեկամներ, ովքեր կանգնած են մեր կողքին ու սատարում են մեր ժողովրդի արդար, բոլոր միջազգային նորմերի շրջանակներում պայքարին:



«Վստահ եմ, որ եթե մենք աննկուն վճռականությամբ կրկին ոտքի կանգնենք մեր հայրենիքի պաշտպանության դիրքերում, աշխարհը վերջապես դեմքով կշրջվի դեպի մեր հնագույն ժողովուրդը, որն արժանի ներդրում է ունեցել եւ դեռ կունենա համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Վստահ եմ, որ եթե մենք աննկուն վճռականությամբ կրկին ոտքի կանգնենք մեր հայրենիքի պաշտպանության դիրքերում, աշխարհը վերջապես դեմքով կշրջվի դեպի մեր հնագույն ժողովուրդը, որն արժանի ներդրում է ունեցել եւ դեռ կունենա համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Մեր գործընկերներից շատերը 2020

Մենք կանգուն ենք»:

Քաղաքական ճարտասանությունների փոխարեն՝ հստակ պատասխանեք՝ ի՞նչ է նշանակում Արցախի կարգավիճակի հարցում նշանոցի իջեցում. Գեղամ Ստեփանյան

«Տպավորություն է, որ Արցախի ժողովրդին նստեցրել են դատապարտյալի աթոռին ու առանց փաստաբանի մեղադրանքներ են առաջադրում եւ փորձում դատավճիռ կայացնել: Մեղադրյալին անգամ թույլ չեն տալիս իր խոսքն ասել, իսկ մեղսագրվող արարքն այն է, որ ժողովուրդն ուղղակի ուզում է իր հայրենիքում ապրել, իրացնել միջազգային փաստաթղթերով մարդուն շնորհված իրավունքներն ու ազատությունները:

Երեկ եւ այսօր Հայաստանի Հանրապետության խորհրդարանում հնչած հայտարարությունները բառի բուն իմաստով ահաբեկման մեջ են գցել Արցախի ժողովրդին: Երբեմն բացահայտ, երբեմն տողատակերում առկա իրողություններն ուղղակիորեն խոցում են պատերազմի, տեղահանության, մարդկային ու անմարդկային զրկանքների միջով անցած մեր հանրությանը, որ բազմաթիվ անորոշությունների առերեսվելով՝ կառչել է այս մի բուռ մնացած Արցախից եւ որեւէ գնով չի պատրաստվում բաց թողնելու այն:

Երկու հայկական հանրապետությունների տարբեր կառույցների, այդ թվում՝ նաեւ խորհրդարանների միջեւ համագործակցության բացակայությունն էլ մեզ՝ Արցախի խորհրդարանականներին, գրկել է հնարավորությունից՝ տեղեկանալու կատարվող զարգացումներին եւ ազդելու գործընթացների վրա: Այդ իսկ պատճառով, որպես երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմնի անդամ՝ ուղիղ եւ հրապարակային հարցադրում եմ ուզում անել ՀՀ իշխանություններին՝ վարչապետի գլխավորությամբ.

- Քաղաքական ճարտասանությունների անպարտությունների փոխարեն հստակ պատասխանեք՝ ի՞նչ է նշանակում Արցախի կարգավիճակի հարցում նշանոցի իջեցում, արդյո՞ք դա նշանակում է Արցախի կարգավիճակ Ադրբեջանի կազմում, արդյո՞ք այսպես կոչված խաղաղության օրակարգն Արցախը Ադրբեջանին բռնակցել է նշանակում:

Արցախում ապրող 120 հազար մարդ, Արցախի ներկայով եւ ապագայով իրապես մտահոգ հայությունն այսօր անորոշության մեջ սպասում է այդ հարցի պատասխանին: Անընդհատ խոսում եք

Արցախի ժողովրդի իրավունքների եւ ազատությունների մասին՝ առանց հստակ հայտարարելու, որ Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում: Եթե Ադրբեջանի կազմում եք պատկերացում այդ իրավունքները, ապա ո՞չ իրավունքների, ո՞չ էլ առավել եւս ազատությունների մասին այլեւս խոսելու կարիք չկա, որովհետեւ ուղղակի չի լինելու այն մարդը՝ Արցախում ապրող հայը, որի իրավունքները պետք է երաշխավորվեն: Սա ապացուցման կարիք չունեցող պարզ ճշմարտություն է եւ վերջ:

Եթե միջազգային հանրությունն է մեզ պարտադրում, այս հարցում իրականում խիստ կասկածներ ունեմ, ապա հենց նույն միջազգային հանրությանը պետք է հասկացնել բոլոր եղանակներով, բոլոր խողովակներն օգտագործելով, որ

- Հարգելի՛ միջազգային հանրություն, ընտրություն եւ կատարում կա՛մ հայ ժողովրդի նոր ցեղասպանության ու տեղահանության, կա՛մ էլ տարբեր ատյաններից պարբերաբար թմբկահարվող մարդու իրավունքների եւ ազատությունների միջեւ, կա՛մ աջակցում եւ բռնապետ ու ռազմական հանցագործին, կա՛մ էլ կանգնում եւ ցեղասպանության վտանգի տակ գտնվող ժողովրդի կողքին:

Այլ տարբերակ չկա: Արցախն առանձին վերցրած չի պատկանում ո՞չ ինձ, ո՞չ մյուսին, ո՞չ էլ երրորդին, այն պատկանում է համայն հայությանը:



Այս իմաստով՝ տեղին են Սպարապետի խոսքերը. «Դարերի մեռած պատմությունը թա՛փ տվեք ձեր հոգուց, մի՛ մեռեք ձեր տան մեջ: Ձեր հոգու մեռելներին թաղե՛ք: Ես երկիրը ձերը չեմ, դուք գալիս-անցնում եք: Ձերը ես երկրի սիրտը պահելն է: Սիրտը»:

Համախմբվել Արցախին գորավիզ լինելու գաղափարի շուրջ. Դավիթ Մելքումյան

«Արցախում, Հայաստանում եւ Սփյուռքում հայությունն այսօր ապրում է մեր ազգի հազարամյա պատմության ամենաշրջադարձային պահերից մեկը: Ամբողջ Արցախում երեկվանից կրկնակի ավելացել են մտահոգությունները, եւ մարդիկ շատ դեպքերում չգիտեն, թե այդ հարցերով ում կարելի է դիմել:

Հանրային իրազեկման ամենաընդունված հարթակներից մեկը հենց Ազգային ժողովն է, եւ կարծես այս առումով մենք փորձում ենք մեր ձեռքը միշտ պահել երկրի կենսագործունեության եւ մեր շուրջը տեղի ունեցող փոփոխությունների գարկերակին: Այնուամենայնիվ, ուզում եմ փաստել, որ մեզ չի հաջողվել կամ ավելի ճիշտ՝ կլինի ասել՝ մենք չենք կարողացել աշխատող եւ մշտական հարաբերություններ ձեւավորել ՀՀ գործող Ազգային ժողովի մարմինների ու մեր գործընկերների հետ:

Կարելի է այս հարցն ընդունել որպես տեխնիկական եւ հատուկ կարեւորություն չտալ դրան, բայց այն, ինչ մենք տեսնում եւ լսում ենք վերջին ամիսների ընթացքում, հետեւանք է նրան, որ Հայաստանի խորհրդարանում ներկայացված պատգամավորների մի սովոր մասը ճիշտ պատկերացումներ չունի այսօրվա Արցախի ու նրա շուրջ կառուցվող անվտանգային միջավայրի, մեր ազատագրական պայքարի տարեգրության, կարգավորման գործընթացի, մերօրյա մարտահրավերների եւ բազմաթիվ այլ խնդիրների մասին: Եվ երբ որ նման պայմաններում մենք համարյա մեկ տարվա ընթացքում չենք կարողանում երկու հայկական հանրապետությունների միջեւ նախորդ տարիներին հաջողությամբ գործած միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի նիստ գումարել, այդ երեւույթին արդեն ուրիշ որակում պետք է տալ:

Մեր պայքարը երբեք տարածքների համար չի եղել, ազատագրական պայքարի դրոշի տակ համախմբվելու արդյունքում մենք վաստակեցինք հայրենիք ունենալու իրավունքը: Այդ ճանապարհին մենք ունեցանք թանկ ու անդառնալի կորուստներ: Հազարավոր

հայրորդներ Արցախից, Մայր Հայաստանից ու Սփյուռքից իրենց կյանքի գնով մեզ՝ ապրողներին են տվել արժանապատիվ ապրելու իրավունքը: Պետք չէ մեզ վախեցնել նոր պատերազմով, որովհետեւ մենք ամենաշատն ենք շահագրգռված խաղաղություն հաստատելու հարցում: Բայց դա չի կարող լինել մեր անցած 30 տարվա պատմությունը ջնջելու ճանապարհով:

Առաջին անգամ չէ, որ մեր պատմության ընթացքում հանդիպում ենք այսպիսի ցավալի եւ բարդագույն իրավիճակների: Բայց միշտ կարողացել ենք



այդ իրավիճակներից դուրս գալ հաղթանակած, դա արել ենք՝ ապավինելով մեր ուժերին, սթափ գնահատելով իրավիճակն ու դրա պատճառները, դասեր քաղելով թույլ տրված սխալներից:

Անցած մեկուկես տարվա ընթացքում բազմաթիվ քաղաքական խորհրդակցությունների եւ հանդիպումների եմ մասնակցել խորհրդարանական եւ արտախորհրդարանական ուժերի, հասարակական տարբեր շերտերն արտացոլող կազմակերպությունների ներկայացուցիչների ու անհատների հետ, հեռախոսագրույցներ եմ ունեցել Սփյուռքի տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ, եւ արդյունքում կարող եմ փաստել, որ հայ ազգը վերջնական չի ջարդվել եւ այսօր կարիք ունի նոր ազգային առաջնորդության, որը կկարողանա ապահովել ազգային միասնությունը:

Դիմում եմ աշխարհասփյուռ հայությանը՝ համախմբվել հայկական Արցախին գորավիզ լինելու գաղափարի շուրջ, եւ օգտագործել մեր բոլոր հնարավորություններն ու կապերը այդ նպատակը աշխարհի համար ընկալելի դարձնելու գործում:

Աստված պահպան բոլորիս»:



«Ջարթնի՛ր, լաո՛...». Համազգային զարթոնքով կանխենք նոր ցեղասպանությունն Արցախում

Սիրելի՛ հայրենակիցներ,
Ս.թ. ապրիլի 23-ին ՀՀ Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ տեղի կունենա «Ջարթնի՛ր, լաո՛...» կարգախոսով ավանդական շահերով երթ, որը կմեկնարկի Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու բակից, ժամը 19:00-ին:

Համազգային զարթոնքով կանխենք նոր ցեղասպանությունն Արցախում:

Եթե հայն իր տան համար չպայքարի, Նախիջեանի, Արեւմտյան Հայաստանի պատմությունն է կրկնվելու



Գյուղացիների տրամադրությունը նորմալ է, ամեն մարդ իրենից կախվածն անում է, դուրս գալու մտադրություն չունի: Վերջին օրերի լարված իրավիճակի հետ կապված՝ ԱՀ Մարտակերտի շրջանի Մեծ շենում տիրող տրամադրությունների մասին «Ապառաժ»-ին պատմում է համայնքի ղեկավար Դավիթ Անանյանը:

Նրա խոսքով՝ չնայած լարվածությանը, մարդիկ իրենց առօրյայով են ապրում: «Սահմանից մոտ 15 կմ հեռավորության վրա է գտնվում գյուղը: Պատերազմից հետո բնակիչների զբաղմունքը փոխվել է. մի մասը պայմանագրային զինծառայության է անցել, մի մասը Սարսանգում է աշխատում, մի մասն էլ՝ Դրմբոնի հանքում», - նշում է վերջին պատերազմում ձախ ձեռքը կորցրած Դավիթ Անանյանը: Ըստ նրա՝ մարդիկ իրենց ապագան գյուղում են տեսնում, կապված են իրենց հողին:

Խոսելով տիրող իրավիճակում փոփոխություն մտցնելու մասին, համայնքի ղեկավարը նշում է, որ այն մեզնից է կախված: «Բոլորս պետք է մեր ներդրումն ունենանք, մտածենք ոչ թե փախչելու, այլ մնալու ու պայքարելու մասին: Եթե հայն իր տան համար չպայքարի, նույն Նախիջեանի, Արեւմտյան Հայաստանի պատմությունն է կրկնվելու: Շատ բան էլ իշխանություններից, ՀՀ-ից է կախված», - համոզված է Դ. Անանյանը:

Պատերազմից հետո Մեծ շենում տեղահանված 7 ընտանիք է հաստատվել: Նրանք տներով ապահովված են, ընթանում են վերանորոգման աշխատանքներ:

Մեծ շեն համայնքի ղեկավարը ոչ միայն իրենց գյուղի, այլև ամբողջ Արցախի հիմնական խնդիրը համարում է անվտանգությունը:

«Մյուս բոլոր խնդիրները լուծվող են: Եթե անվտանգության առաջվա մակարդակը լինի, երկիրը կբարգավաճի», - նշում է Դավիթ Անանյանը:

Տարեիկ ԱՂԱԶԱՆՅԱՆ

Աղավտյում մեծ շուքով նշել են Ծաղկազարդի տոնը

Հայաստանից Արցախ ժամանողներին առաջինը դիմավորում է Աղավտ գյուղը՝ Արիավանը:

Աղավտն Արցախի այն հերոսական գյուղերից է, որի բնակիչները պատերազմի օրերին հերոսաբար դիմադրել ու պաշտպանել են գյուղը եւ առ այսօր կառչած են իրենց հողից, չնայած չորսընթաց թշնամիներ են, իսկ ժամանակ առ ժամանակ ստիպված են լինում հանդուրժելու նաեւ թշնամու հերթափոխը:

Ապրիլի 10-ին, երբ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում էր Ծաղկազարդի տոն օրը, Աղավտյում կրկին մարդաշատ էր: Ամեն տեղից հյուրեր էին եկել՝ Ծաղկազարդի տոնը Աղավտյում նշելու, որի առիթով գեղեցիկ էւ հետաքրքիր միջոցառում էին կազմակերպել «Մշակութամետ» անհատական նախաձեռնության կամավորները:

Աղավտյոյ դպրոցի բակում բնակիչները համեղ հյուրասիրություն էին կազմակերպել հյուրերի համար, որտեղ ներկայացրել են ազգային տարատեսակ ուտեստներ:

Միջոցառումը մեկնարկել է Աղավտ գետի ափին, որտեղ դպրոցի աշակերտներից Նիկոլայը ներկաներին պատմեց գյուղի ազատագրման եւ վերաբնակեցման պատմությունը, այնուհետեւ շրջելով գյուղի տարածքում՝ ներկաներին ծանոթացրեց գյուղի թաղամասերին, որոնք կրում են հերոսների անունները:

Խորհրդանշական էր Մարաղայի շարժերի օրը գտնվել Աղավտյում, քանի որ Աղավտյոյի ազատագրումից հետո Մարաղայի շարժերից փրկված հայերը հաստատվել են հենց Աղավտյոյում:

Ներկաներին ուռնու ճյուղերով պսակներ բաժանելուց հետո դպրոցի բակում կազմակերպվել էր մշակութային միջոցառում՝ համեմված ազգային երգ ու պարով, խաղերով ու մրցույթներով:

«Մշակութամետ» նախաձեռնության անդամ Միրաբ Բաբայանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ միջոցառման անցկացման միտքը նոր է, որ ծագել է, քանի որ մի տարուց ավելի է, ինչ իրենք այցելում են սահմանային գյուղեր:

«Մշակութամետ» նախաձեռնության շրջանակում մեր կամավորներն ամեն շաբաթ այցելում են ամենահեռու գյուղեր, որտեղ մշակույթի դասավանդման հնարավորություն չկա, եւ դասավանդում ենք, քանի որ մեր նպատակը սահմանամերձ գյուղերը սահմանապահ գյուղեր դարձնելն է: Հիմա արդեն նաեւ Արցախում ենք, Աղավտ գյուղում, եւ մեր երեք ուսուցիչները կամավոր տեղափոխվել են, ու մեկ ամսից ավելի է՝ ինչ այստեղ են», - ասել է Միրաբ Բաբայանը:

Միրաբ Բաբայանն ընգծեց, որ նպատակ ունեն մեր ազգային տոներն ու ծեսերը վերականգնելու:

«Սրանից առաջ նաեւ Բարեկենդանն ենք նշել Տավուշում, այսօր Ծաղկազարդն ենք նշում Աղավտյոյում, եւ կշարունակենք, սակայն այս ամենի հիմքում հայկական մշակույթի վերածննդի ապահովումն է մատաղ սերնդի մեջ», - նշում է նա:

Ապագայում Արցախում սպասվում են նաեւ ուրիշ ծրագրեր, սակայն Միրաբ Բաբայանը կարծում է, որ լավ կլինի, եթե կառավարության հետ համատեղ իրականացվեն ծրագրերը, քանի որ այս պահին բոլոր ծրագրերն իրականացվում են կամավորների միջոցներով: Այս պահին նախաձեռնությանն անդամակցում են 100-ից ավելի կամավորներ:

Թշնամու աչքի առջեւ հայկական մշակույթի տարածումն Արցախում, մեր ազգային, եկեղեցական տոների նշումը փաստում է, որ Արցախում կյանքը շարունակվում է եւ արցախցին հավատարիմ է իր սկսած պայքարին, պատրաստակամ՝ հայկական պահել սրբագործված իր հողը եւ պայքարելով վաստակել այնտեղ ազատ ապրելու իր բնական իրավունքը:

Սուրբ Չատիկի տոնը՝ Բերդաշենում

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ապրիլի 17-ին նշել է Քրիստոսի հարության տոնը՝ Սուրբ Չատիկը: Այդ առիթով մշակութային մեծ միջոցառում էր կազմակերպվել Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքում՝ «Աղջկա բերդ» կոչվող հուշահամալիրի տարածքում:

Միջոցառմանը ներկա էին ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, շրջանի պատասխանատուներ եւ հյուրեր:

Բերդաշենի փառատոնին ներկայացված էր ժենգյալով հացի պատրաստման ցուցադրում, տեղական գինիների հյուրասիրություն եւ վաճառք, գյուղի երեխաների կողմից պատրաստված ձեռագործ հուշանվերների ցուցադրություն-վաճառք, ինչպես նաեւ ազգային ուտեստների, քաղցրավենիքների, ինքնայեռով թեյի, զատկական փլավի ու ներկած ձվերի հյուրասիրություն:

Միջոցառման գեղարվեստական մասն ապահովել են դպրոցականները: Միջոցառումն ուղեկցվել է արտասանություններով, երգերով, ազգային խաղերով եւ պարերով:

«Ապառաժ»-ի հետ զրույցում ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը նշեց, որ սա նույնպես մշակութային քաղաքականության ապակետրոնացման ձեռքից մեկն է:

«Այս կերպ է համայնքը ինքնադրստեղծում եւ իրականացնում մշակույթի հանրային ընկալումը, որովհետեւ ի վերջո մեր ժողովուրդը եւ հատկապես արցախահայությունը խորհրդային ժամանակաշրջանում զրկված է եղել եկեղեցական տոներ նշելու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով նորից ավանդույթների վերականգնումը եւ նշումն անհրաժեշտ է, իսկ Չատիկը Հայ առաքելական եկեղեցու կարեւորագույն տաղավար տոներից մեկն է: Բերդաշեն համայնքն էլ նպատակահարմար է գտել այս ձեռով իր տոնածիսական մշակույթը եւ մշակույթի հանրային ընկալումը տոնի ժամանակ այս կերպ իրականացնել», - ասել է նա:

Միջոցառման նախաձեռնողներից Շուշանիկ Մանուկյանը մեզ հետ զրույցում նշեց, որ Բերդաշեն փառատոնի միտքը ոչ թե իր, այլ աշակերտների մոտ է ծագել:

«Անցած տարի, երբ մենք, Դասավանդի՛ր,

Հայաստան» ծրագրի հնարավորությունն օգտագործելով սովորում էինք նախագծային ուսումնառություն, այդ ժամանակ երեխաների մոտ միտք առաջացավ կազմակերպել փառատոն, որտեղ կվաճառվեն իրենց ձեռագործ աշխատանքները: Այսօր մենք ունենք այդ հնարավորությունը», - ասել է նա:

Նրա խոսքով, նախաձեռնության իրականացման համար օգնել է «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի ամբողջ կազմը, ինչպես նաեւ տրամադրել են նախաձեռնության դրամաշնորհային մասը: Դրանից բացի, մեծ աջակցություն է եղել համայնքի կողմից, քանի որ առանց նրանց



եւ ոչինչ չէի կարող անել: Բայց ամենազխավոր օգնությունը եւ ստացել եմ երեխաներից, քանի որ ամեն ինչ իրենք են արել, իսկ ես եղել եմ նրանց կողքին:

«Նման միջոցառումներ կազմակերպելով՝ ուզում ենք ասել, որ մենք ապրում ենք եւ շարունակելու ենք ապրել, իսկ միջոցառման ավարտին նախատեսում ենք ունենալ խաղաղության պատ, որի վրա կլինեն խաղաղության բարեմաղթանքներ:

Այդ բարեմաղթանքներն աշխարհին ցույց են տալու, որ խաղաղ ապրելու դեպքում մենք հենց այսպես ենք ապրելու», - ասել է Շուշանիկ Մանուկյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայտարարություն

Կորել է Գոռ Արմենի Հայրապետյանի 2020 թվականին ճարտարի Ազատամարտիկների անվան հ.1 միջնակարգ դպրոցի կողմից տրված հիմնական կրթության վկայականը: Համարել անվավեր: